Հարցում. Պատկերը Հայաստանում նախագահական ընտրություններից առաջ

Հիմնական արդյունքներ

Հունվարի 25, 2013թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հարցման մեթոդաբանությունը և որակի վերահսկումը
2. Հանրության հետաքրքրվածությունը և տեղեկացվածությունը քաղաքականությունից
3. Հայաստանում իրավիճակի գնահատականները
4. Նախագահական ընտրություններին քվեարկելու մտադրությունները
5. Ընտրողների բնութագրերը և ընտրելու դրդապատճառները

1. Հարցման մեթոդաբանությունը և որակի վերահսկումը

Մեթոդաբանություն

- Հետազոտությունում կիրառվել է բազմաստիճան, պատահական (հավանականային) ընտրանք: Ընտրանքի առաջնային միավորները՝ բնակավայրերը, ընտրվել են ՀՀ բոլոր վարչական-տարածքային միավորներից՝ համամասնորեն: ***TNS opinion*** և **IPSC** ընկերությունները կիրառել են հնարավոր լավագույն մեթոդաբանությունը:

- Իրականացվել է **1,607** դեմ առ դեմ հարցազրույց՝ **2013** թ. հունվարի **15-20**-ը:

- Հարցազրույցներն իրականացվել են Հայաստանի **10** մարզերում և Երևանի բոլոր համայնքներում՝ ՀՀ բնակչության բաշխմանը համամասնորեն. Երևանում՝ **34.1%**, մարզերում՝ **65.9 %**:

- Տնային տնտեսություններն ընտրվել են *պատահական քայլով* ՝ բացառելու համար հարցազրուցավարների կողմից հարցվողների հնարավոր կողմնակալ ընտրության հետևանքով առաջացող սիստեմատիկ սխալները: Պատահական ընտրությունն ապահովելու համար տնային տնտեսություններում հարցման համար ընտրվել է այն անդամը, ում ծննդյան օրն ամենամոտն էր հարցման օրվան:

- Եթե հարցման համար ընտրված անձը տվյալ պահին բացակայել է, ապա իրականացվել է մեկից երկու հետայց՝ այնուամենայնիվ հենց նրա հետ հարցազրույց իրականացնելու համար: Հետայցերի անհաջողության կամ ընտրված անձի՝ հարցազրույցին մասնակցելուց հրաժարվելու դեպքում հարցազրուցավարը նախորոշված ընթացակարգով ընտրել է հաջորդ տնային տնտեսությունը:

- Ընտրանքի իրականացման վերահսկման համար յուրաքանչյուր հարցազրուցավար պարտավոր է եղել լրացնել իր այցելած տնային տնտեսությունների հասցեների այցացուցակը: Այցացուցակների տվյալների շտեմարանը վերլուծվել է ***TNS opinion-ի*** ներկայացուցչի կողմից՝ հավաստիանալու, որ հարցազրուցավարները պահպանել են տնային տնտեսությունների և հարցվողների ընտրության նախորոշված ցուցումները:

- Տվյալները համակշռվել են՝ ըստ ՀՀ բնակչության սեռատարիքային բաշխման: Հետազոտության արդյունքների ընտրանքային սխալը **±2.4%** է:

EuFoA European Friends of Armenia

TNS opinion

IPSC

Որակի վերահսկումը

- ***TNS opinion***-ը և **IPSC**–ն համատեղ պլանավորել և համաձայնեցրել են ինչպես պատահական ընտրանքի կազմավորումը, դաշտային աշխատանքների իրականացումը, այնպես էլ որակի վերահսկողության մեթոդաբանությունը:

- Հարցազրույցների իրականացման որակի համապատասխան ստանդարտներն ապահովելու համար հարցազրույցների **20%**-ն իրականացվել է **IPSC**-ի դաշտային աշխատանքների որակի վերահսկման համակարգողների ներկայությամբ: **IPSC**-ի հարցաթերթերի որակի ստուգման պատասխանատուները ստուգել են բոլոր հարցաթերթերի լրացման որակը, այդ թվում՝ լրացված պատասխանների տրամաբանական համապատասխանությունը: Հարցաթերթերի **6%**-ը ստուգվել է հետայցերով: Իրականացվել է տվյալների շտեմարան մուտքագրված հարցաթերթերի **25%**-ի վերստուգում: Բոլոր ստուգումների արդյունքում խոտանվել է **58** հարցազրույց **(3.6%**- ի չափով) և վավեր է ճանաչվել **1,607** հարցազրույց:

- ***TNS opinion***-ը և **IPSC**-ն միմյանցից անկախ ստուգել են հարցազրուցավարների երթուղային թերթիկները՝ հավաստիանալու, որ հարցվողների ընտրությունն իրականացվել է նախորոշված պատահական ընթացակարգով:

- **IPSC**-ն հեռախոսազանգերի միջոցով ստուգել է բոլոր հարցվածների **36%**-ի ժողովրդագրական բնութագրերը, ինչպես նաև հարցումների իրականացման պայմանների համապատասխանությունը հարցազրուցավարի կողմից հարցաթերթերում լրացված տվյալներին: Բացի դրանից, ***TNS opinion***–ը հեռախոսազանգերով ստուգել է իրականացված հարցազրույցների պատահականորեն ընտրված **15%**-ը՝ հարցվածների ժողովրդագրական բնութագրերը և հարցվողի դիրքորոշումներին վերաբերող երկու պատահականորեն ընտրված հարցերին տրված պատասխանները: Ստուգումը հավաստել է հավաքագրված տվյալների համապատասխանությունը որակի պահանջված մակարդակին:

- ***TNS opinion***-ը բազմակողմանիորեն ստուգել է տվյալների շտեմարանը՝ տրամաբանական անհամապատասխանությունների, ոչ ադեկվատ պատասխանների, պատահական սխալների և անվավեր տեղեկությունների հայտնաբերման նպատակով: Ստուգման արդյունքում արձանագրվել է դրական գնահատական՝ ոչ մի հարցազրույց չի խոտանվել:

2. Հանրության հետաքրքրվածությունը և տեղեկացվածությունը քաղաքականությունից

Բնակչության 53%-ը «ավելի շուտ» կամ «լիովին» հետաքրքրված է քաղաքականությամբ: Հետաքրքրությունն աճում է տարիքին և կրթական մակարդակին զուգահեռ և համադրելի է 2012թ.-ի ապրիլ և մայիս ամիսների արդյունքներին:

Q1. Ասացեք, խնդրեմ, որքանո՞վ եք հետաքրքրված ՀՀ սոցիալ-քաղաքական հարցերով:







Հեռուստատեսությունը շարունակում է մնալ քաղաքական տեղեկատվության հիմնական աղբյուրը: Ինտերնետի դերը շարունակաբար աճում է, այն դեպքում, երբ տպագիր մամուլի դերը՝ նվազում:

Q2. Ասացեք, խնդրեմ, ինչպե՞ս եք տեղեկանում Հայաստանի սոցիալ-քաղաքական իրադարձությունների մասին:



Ինտերնետի դերը՝ որպես սոցիալ-քաղաքական տեղեկատվության աղբյուր, վերջին մեկ տարվա ընթացքում աճել է, հատկապես երիտասարդության շրջանում

Q2. Ասացեք, խնդրեմ, ինչպե՞ս եք տեղեկանում Հայաստանի սոցիալ-քաղաքական իրադարձությունների մասին:



Քաղաքական ներգրավվածության ձևերը չեն փոփոխվել, բացի «ընկերների հետ քաղաքական հարցերի քննարկումից», որը, այնուամենայնիվ, մնում է ընդգրկվածության ամենատարածված ձևը:

Q3. Այժմ մի քանի հարց Ձեր հասարակական-քաղաքական ներգրավվածության մասին:

Քաղաքական ներգրավվածության ձևերի տարածվածությունը



3. Հայաստանում իրավիճակի գնահատականները

2012թ. մարտի հետ համեմատած՝ երկրում տիրող իրավիճակի և դրա փոփոխության միտումների գնահատականները գործնականում չեն փոխվել:

Q18 Համեմատելով **5** տարի առաջվա հետ՝ Ձեր կարծիքով՝ Հայաստանում ընդհանուր իրավիճակը… : *(«Մնացել է նույնը» տարբերակը չի ընթերցվել)*

Q19. Իսկ հաշվի առնելով մեր երկրի ընդհանուր վիճակը՝ ի՞նչ եք կարծում, Հայաստանում կյանքն ընդհանուր առմամբ … :





Գործող նախագահի գործունեությունը դրական է գնահատել հարցվածների 64%-ը:

Q15. Ասացեք, խնդրեմ, ընդհանուր առմամբ ինչպե՞ս կգնահատեք ՀՀ Նախագահի վերջին 5 տարիների գործունեությունը:



4. Նախագահական ընտրություններին քվեարկելու մտադրությունները

Մարդիկ առավել լավ են տեղեկացված Ս. Սարգսյանի, Ռ. Հովհաննիսյանի և Գ. Ծառուկյանի մասին: Ռ. Հովհաննիսյանի և Պ. Հայրիկյանի մասին տեղեկացվածության աստիճանը 2012 թ.-ի մարտի համեմատ աճել է ավելի քան երկու անգամ:

Ստորև ներկայացված են հարցվողների կողմից նշված 157 քաղաքական գործիչներից նրանք, ում նշել է հարցվածների 2% կամ ավելին:

Q10. Նշեք, խնդրեմ, հայաստանյան հայտնի քաղաքական գործիչների մինչև 5 անուն, որոնց մասին առավել լավ եք տեղեկացված: (Բաց հարց՝ առանց որևէ հուշման)



Չնայած ոչ բոլոր կուսակցություններն են առաջադրել թեկնածուներ, սակայն կարելի է ակնկալել ընտրություններին մասնակցության բարձր ցուցանիշ:

Q4. Հավանաբար գիտեք, որ այս տարվա փետրվարի 18-ին Հայաստանում տեղի են ունենալու նախագահական ընտրություններ: Այդ ընտրություններին Դուք...:
(«Դեռ չեն որոշել» տարբերակը չի ընթերցվել)





Նախագահական ընտրարշավը գլխավորում է Ս. Սարգսյանը: Ռ. Հովհաննիսյանը կարողացել է հստակորեն ներկայանալ որպես ընդդիմության առաջատար թեկնածու. նրան աջակցում են ավելի շատ ընտրողներ, քան մնացած բոլոր ընդդիմադիր թեկնածուներին միասին:

Q5. Եթե հաջորդ կիրակի տեղի ունենային նախագահական ընտրություններ, ապա Դուք ո՞ր քաղաքական գործչի օգտին կքվեարկեիք: *(Ներկայացված է թեկնածուների պաշտոնական ցուցակը)*

Թեկնածուների վարկանիշները՝ հաշվարկած ամբողջ ընտրանքից (ներառյալ նրանց, ովքեր դժվարացել կամ հրաժարվել են պատասխանել)



Միայն «Վավեր» պատասխանների հաշվառման դեպքում (առանց «չգիտեմ», «հրաժարվում եմ պատասխանել», «ոչ մեկին ձայն չեմ տա», «չեմ մասնակցելու ընտրություններին» տարբերակների) Ս. Սարգսյանն ստանում է երեք անգամ ավելի ձայն, քան Ռ. Հովհաննիսյանը՝ դրանով իսկ դառնալով առաջին փուլի ամենահավանական հաղթողի:

Q5. **Եթե հաջորդ կիրակի տեղի ունենային նախագահական ընտրություններ, ապա Դուք ո՞ր քաղաքական գործչի օգտին կքվեարկեիք:** ***(Ներկայացված է թեկնածուների պաշտոնական ցուցակը)***



Ս. Սարգսյանի ընտրազանգվածն առավել համոզված է, որ իր որոշումը չի փոխվի: Չորս առաջատար թեկնածուների ընտրազանգվածների ավելի քան երկու երրորդը իր որոշումը համարում է վերջնական:

Q6. Որքանո՞վ եք վստահ, որ Ձեր որոշումը վերջնական է:



Ր. Հովհաննիսյանի «հակա-վարկանիշն» ամենափոքրն է: Հարցվածներն ավելի շուտ հակված են «երբեք չքվեարկելու» քիչ հայտնի թեկնածուների օգտին:

Q9. Իսկ ո՞ր քաղաքական գործիչների օգտին Դուք ոչ մի դեպքում չէիք քվեարկի, եթե նախագահական ընտրությունները լինեին հաջորդ կիրակի: ***(Մինչ 5 պատասխան, ներկայացված է թեկնածուների պաշտոնական ցուցակը)***



Թեկնածուին ձայն տալու հիմնական պատճառներն են՝ թեկնածուի քաղաքական ծրագիրը և թեկնածուի կամ նրա կուսակցության նկատմամբ վստահությունը:
Հ. Բագրատյանին ընտրողների 30%-ը նրանք են, ում նախընտրելի թեկնածուն չի առաջադրվել:

Q7. Իսկ որո՞նք են այդ թեկնածուին ձայն տալու հիմնական պատճառները: Կարող եք ընտրել բոլոր այն տարբերակները, որոնք կարևոր եք համարում:

Ընտրելու պատճառը	Ինձ դուր է գալիս նրա քաղաքական ծրագիրը կամ նախկին գործունեությունը	Վստահում եմ նրան կամ իր կուսակցությանը	Այս ընտրությունների ն այլընտրանքի բացակայությունը	Իմ նախընտրած թեկնածուն չի մասնակցում այս ընտրություններին	Ունեմ անձնական կապեր կամ պարտավորություններ այդ թեկնածուի հանդեպ
Սերժ Սարգսյան (N=708)	51%	43%	31%	11%	4%
Ռաֆֆի Հովհաննիսյան (N=214)	51%	47%	26%	10%	3%
Պարույր Հայրիկյան (N=49)	67%	50%	16%	6%	0%
Հրանտ Բագրատյան (N=46)	66%	47%	24%	30%	1%

Ր. Հովհաննիսյանն ստացել է ամենաբարձր գնահատականները՝ որպես «մարդկանց մասին հոգ տանող», «վստահելի» և ամենից ավելի «ընդունված» թեկնածու: Մինչդեռ գործող նախագահ Ս. Սարգսյանն ստացել է բարձր գնահատականներ՝ որպես քաղաքականապես և ֆինանսապես հզոր, ինչպես նաև ամենափորձառու թեկնածու:

Q11. Հետևյալ հատկանիշներից որո՞նք են բնութագրում Ձեր նշած քաղաքական գործիչներին: *(Հարցվել է միայն նրանց, ովքեր նշել են քաղաքական գործչին Q 10-ում)*

Քաղաքական գործիչ	Ճանաչելիության ցուցանիշ	Փորձառու է	Վստահելի է	Հոգ է տանում ժողովրդի մասին	Հզոր է ֆինանսապես	Հզոր է քաղաքականապես	Ընդունված է
Սերժ Սարգսյան (N=644)	42%	88%	64%	50%	81%	83%	58%
Ռաֆֆի Հովհաննիսյան (N=539)	32%	74%	71%	59%	36%	56%	71%
Պարույր Հայրիկյան (N=460)	26%	75%	52%	38%	17%	59%	50%
Հրանտ Բագրատյան (N=217)	12%	69%	41%	29%	30%	39%	30%

Ս. Սարգսյանը ընկալվում է որպես Հայաստանի քաղաքական հիմնախնդիրները լուծող լավագույն թեկնածու:
Ր. Հովհաննիսյանը գնահատվել է որպես մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության խնդիրները լավագույնս լուծող թեկնածու:
Մնացած թեկնածուները հասարակության կողմից չեն ընկալվում որպես Հայաստանի քաղաքական խնդիրները լուծելու ունակ քաղաքական գործիչներ:

Q16. Այժմ ես կկարդամ Հայաստանի համար կարևոր մի քանի հիմնախնդիրներ: Ասացեք, խնդրեմ, ո՞ր թեկնածուն կարող է լավագույնս լուծել դրանք:

Խնդիր	Սերժ Սարգսյան	Ռաֆֆի Հովհաննիսյան	Պարույր Հայրիկյան	Հրանտ Բագրատյան	Թեկնածուներից ոչ մեկը	Չգիտեմ
Գործազրկություն	27%	16%	4%	6%	28%	17%
Մարդու իրավունքներ/ժո-ղովրդավարություն	21%	23%	14%	3%	15%	23%
Կոռուպցիա	29%	14%	6%	4%	29%	18%
Կրթական համակարգի խնդիրներ	30%	13%	7%	5%	16%	26%
Առողջապահական համակարգի խնդիրներ	36%	11%	2%	3%	18%	27%
Բնապահպանական խնդիրներ	29%	11%	5%	4%	17%	31%
Թանկացումներ	33%	12%	4%	6%	27%	17%
Աղքատություն	30%	15%	3%	5%	29%	16%
Երկրի արտաքին անվտանգություն	59%	9%	3%	1%	10%	16%
Արտաքին հարաբերություններ	49%	16%	4%	2%	10%	19%

Բոլոր հարցվածների ավելի քան 60%-ը դրական է վերաբերվում Ս. Սարգսյանին: Պ. Հայրիկյանը և Հ. Բագրատյանն ընկալվում են որպես ամենաքիչ հավանության արժանացած թեկնածուներ: Չորս թեկնածուներ հասարակությանը շատ քիչ են հայտնի:

Q14. Այժմ ես կկարդամ առաջադրված թեկնածուների անուններ, իսկ Դուք 0-10 բալանոց սանդղակով գնահատեք, թե որքանով եք հավանում նրանց, որտեղ 0-ն նշանակում է, որ ընդհանարապես չեք հավանում, 10-ը՝ լիովին հավանում եք:



5. Ընտրողների բնութագրերը և ընտրելու դրդապատճառները

2012թ. մայիսի ընտրություններում ՀՀԿ և Ժառանգության օգտին քվեարկած անձանց ձայների բացարձակ մեծամասնությունը անցել է այդ կուսակցությունների կողմից առաջադրված թեկնածուներին:
ԲՀԿ օգտին քվեարկածների ձայների կեսից ավելին անցել է Սերժ Սարգսյանին, իսկ մոտ 1/3-ը՝ Ր. Հովհաննիսյանին:

Q13. Ասացեք, խնդրեմ, ո՞ր կուսակցության օգտին եք քվեարկել 2012թ. մայիսի ԱԺ ընտրություններին:

Q5. Եթե հաջորդ կիրակի տեղի ունենային նախագահական ընտրություններ, ապա Դուք ո՞ր քաղաքական գործչի օգտին կքվեարկեիք:



Ռ. Հովհաննիսյանի ընտրազանգվածն ունի քիչ ավելի բարձր կրթամակարդակ, և նրանց հարաբերականորեն ավելի մեծ մասն է բնակվում Երևանում:
Ս. Սարգսյանի ընտրազանգավածում ավելի շատ են գյուղաբնակները:

Q5. Եթե հաջորդ կիրակի տեղի ունենային նախագահական ընտրություններ, ապա Դուք ո՞ր քաղաքական գործչի օգտին կքվեարկեիք: (*Ներկայացվել է ընտրությանը մասնակցող թեկնածուների պաշտոնական ցանկը)*





Ընդդիմադիր թեկնածուների օգտին քվեարկողների մեկ երրորդից ավելին գործող նախագահի գործունեությունը գնահատել է «լավ» կամ «շատ լավ»:
Մյուս կողմից, Ս. Սարգսյանի օգտին քվեարկողների 15%-ը նրա գործունեությունը գնահատել է «վատ»:

Q5. Եթե հաջորդ կիրակի տեղի ունենային նախագահական ընտրություններ, ապա Դուք ո՞ր քաղաքական գործչի օգտին կքվեարկեիք: *(Ներկայացվել է ընտրությանը մասնակցող թեկնածուների պաշտոնական ցանկը)*

Q15. Ասացեք, խնդրեմ, ընդհանուր առմամբ ինչպե՞ս կգնահատեք ՀՀ Նախագահի վերջին 5 տարիների գործունեությունը:



Ընդդիմադիր թեկնածուների օգտին քվեարկողների գնահատականները Հայաստանում առկա իրավիճակի վերաբերյալ շատ ավելի բացասական են, քան գործող նախագահի օգտին քվեարկողներինը:

Q5. Եթե հաջորդ կիրակի տեղի ունենային նախագահական ընտրություններ, ապա Դուք ո՞ր քաղաքական գործչի օգտին կքվեարկեիք: *(Ներկայացվել է ընտրությանը մասնակցող թեկնածուների պաշտոնական ցանկը)*

Q19. Իսկ հաշվի առնելով մեր երկրի ընդհանուր վիճակը՝ ի՞նչ եք կարծում, Հայաստանում կյանքն ընդհանուր առմամբ ...:



Բոլոր հարցվածների կեսից ավելին ԲՀԿ-ի՝ թեկնածու չառաջադրելու որոշումը համարել է սխալ: ՀՅԴ ընտրազանգվածի մեծ մասը սխալ է համարել ՀՅԴ-ի, իսկ ՀԱԿ-ի ընտրազանգվածի մեծ մասը՝ ՀԱԿ-ի՝ թեկնածու չառաջադրելու որոշումները:

Q17. Ազգային ժողովում գործող 3 կուսակցություններ նախագահական ընրություններին չեն առաջադրել որևէ թեկնածու: Ասացեք, խնդրեմ, ինչպիսի՞ն է Ձեր մոտեցումն այս հարցի վերաբերյալ: Ստեղծված պայմաններում [...] կուսակցության համար որոշումը [ճիշտ է / սխալ է]:

Q13. Ասացեք, խնդրեմ, ո՞ր կուսակցության օգտին եք քվեարկել 2012թ. մայիսի ԱԺ ընտրություններին:



TNS opinion

Շնորհակալություն

Poll: A Snapshot ahead of Armenia's Presidential Elections

Հարցում. Պատկերը Հայաստանում նախագահական ընտրություններից առաջ

© European Friends of Armenia (EuFoA), 2013
© Հայաստանի Եվրոպացի Բարեկամներ (ՀԵԲ), 2013թ.

www.EuFoA.org www.EuFoA.am

Tel/Հեռ.: + 32 2 233 11 00
Email/Էլ. փոստ: brussels@eufoa.org